ԱԶԳԱԳՐԱԳԵՏ ԻՐԻՆԱ ՎԼԱԴԻՄԻՐՈՎՆԱ ԴՈԼԺԵՆԿՈ
(1945 -2007)

2007 թ. նոյեմբերի 2-ին կյանքից հեռացավ ազգագրագետ, պատմական գիտությունների թեկնածու Իրինա Դոլժենկոն: Ավարտելով Մոսկվայի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի ազգագրության բաժինը՝ նա 1969 թ. տեղափոխվեց Երևան և 1979-ից մինչև իր կյանքի ավարտը աշխատեց ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնում, իբրև ավագ գիտաշխատող՝ վայելելով գործընկերների սերն ու հարգանքը: Աշխատանքային գործունեության սկզբից ի վեր ձեռնամուխ է եղել XIX դ. մինչև XX դ. սկիզբը Հայաստանում բնակություն հաստատած ռուս տարագիր բնակչության էթնոմշակութային գործընթացների համակողմանի բացահայտմանն ու հետազոտությանը:

Ի. Դոլժենկոյի գիտական գործունեության մեջ մեկտեղվել են դաշտային աշխատողի, աղբյուրագետի և ազգագրագետ հետազոտողի բացառիկ ունակությունները: Յուրատիպ կյանք ու կենցաղով, դավանանքով մոլոկանների հետ համագործակցությունը բացառիկ դժվարությունների հետ էր կապված: Ի. Դոլժենկոն դաշտային աշխատողի հմտությամբ, մոլոկանների վարք ու բարքի խստագույն կանոնների նկատմամբ դրսևորած հարգալից վերաբերմունքով, իրեն բնորոշ զուսպ ու կիրթ պահվածքով կարողանում էր ընդհանուր լեզու գտնել նրանց հետ՝ միաժամանակ ձեռք բերելով վստահություն ու հեղինակություն: Նրան ճանաչում էին Հայաստանում բնակվող գրեթե բոլոր մոլոկանները: Տարիների ընթացքում Ի. Դոլժենկոն արխիվային աղբյուրների և սեփական գրառումների համադրմամբ ու քննական վերլուծություններով ներկայացրել է ոչ միայն 1830-1850-ական թթ. Արևելյան Հայաստանում հաստատված ռուս բնակչության ներգաղթի պատմությունը, այլև անդրադարձել է նրանց կրոնական համոզմունքներին, հոգևոր մշակութային արժեքներին:

Ի. Դոլժենկոյի՝ «Արևելյան Հայաստանի ռուս գյուղացիության տընտեսական և հասարակական կենցաղը» (Ե., 1985, ռուսերեն) մենագրությունը առաջին լուրջ հետազոտությունն է ռուս ուղղափառների և աղանդավորների կյանքի տարբեր բնագավառների վերաբերյալ:

Ի. Դոլժենկոյի գիտական հետազոտությունների շրջանակները չեն սահմանափակվել սոսկ ռուս բնակչության հոգևոր-մշակութային խնդիրների լուսաբանմամբ: Նա ձեռնամուխ է եղել նաև Հայաստանում բնակվող ազգային այլ փոքրամասնությունների՝ ուկրաինացիների, ասորիների, հրեաների մշակութային-պատմական խնդիրներին և միգրացիոն գործընթացներին, որոնք տեղի էին ունենում հատկապես Հայաստանի անկախությունից հետո՝ հանրապետությունում ստեղծված տնտեսական ճգնաժամի պայմաններում: Նա ակտիվորեն համագործակցել է ռուսական մշակութային «Հարմոնիա» միջազգային կենտրոնի, «Սլավոնական տուն» ռուսական հասարակական կազմակերպության, ինչպես նաև Հայաստանում ՌԴ դեսպանատան հետ: Ի. Դոլժենկոյի աշխատանքները կովկասագիտության, մասնավորապես ազգագրության պատմության մեջ ունեն իրենց մնայուն և արժեքավոր տեղը:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Լ. Մ.
Պատմական գիտությունների դոկտոր